

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ՝ ՈՒՂՂՅԱԼ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(1974 թ. մայիս)

Մեզի համար հոգեկան իրավ մխիթարություն է, Մեր ողջույնի և օրհնության խոսքը ուղղել տիրախնամ թեմիդ պատգամավորական ժողովին և մաղթել ամբողջական հաջողություն ժողովիդ աշխատանքներուն:

Քաջ գիտենք, թե, մանավանդ վերջին տարիներուն, հոգևոր առաջնորդության ներքև տ. Թորգոմ արքեպիսկոպոսի, ձեր թեմական կեդրոնի կազմակերպությունը, իր բազմակողմանի գործնեությամբ, և թեմի եկեղեցական համայնքները, իրենց եկեղեցաշեն աշխատանքներով, նոր հորիզոններ բացին ամերիկահայ մեր հավատացյալ ժողովուրդի եկեղեցական-ազգային կյանքին մեջ, ներշնչելով մեզի ամենուս ավելի հույս և ավելի լավատեսություն դեպի ձեր ապագան: Մեր հայրական գնահատանքը ի մասնավորի կուղղվի այսօր ձեր բարեջան թեմական առաջնորդին:

Այսօր, երբ դուք հավաքված եք՝ ձեր գնահատանքի խոսքը ընելու անցյալ ձեր գործնեության նկատմամբ, այլև նոր ծրագիրներ մշակելու ձեր թեմի և եկեղեցիներու հետագա գործնեության կապակցությամբ, ձեզի կհղեմք Մեր ամենեռապահ գնահատանքի արտահայտությանց հետ, նաև Մեր ջերմ աղոթքը, որ Տիրոջ օգնականությամբ ու միշտ նոր ներշնչումներով լի, շարունակեք ձեր սկսած աշխատանքներու և ձեր ծրագրած նոր առաջադրանքներու կենսագործումը, հառավել շինություն ձեր ժողովուրդի հոգևոր կյանքի և հառավել շենություն ձեր համայնքներու եկեղեցիներուն և անոնց կից կրոնական-կրթական և մշակութային կազմակերպություններուն:

Մասնավոր կարևորությամբ պարտք կզգանք Մեր գնահատանքը արտա-

հայտելու ձեր կրթական գործունեության և դպրոցաշինության ձեռնարկներում, որոնք պիտի ապահովեն նոր սերունդներու կրոնական և բարոյական դաստիարակությունը հայկական ոգեկանության արժեքներու լույսին տակ, արժեքներ, որոնք բյուրեղացած են մեր ազգային մշակույթին, մեր ազատաշունչ պատմության և մեր ապրող ու շնչող մայրենի լեզվին մեջ:

Սիյուռքի տարածքի վրա բնակող մեր ժողովուրդի կյանքին մեջ լույս աշխարհ բերել հայ ոգեկանության այս արժեքները, պիտի նշանակե ոչ միայն հզոր ազդակներ ապահովել ի խնդիր մեր Մայր եկեղեցվո և մեր հայկականության անաղարտ պահպանման, այլ նաև միաժամանակ կարևոր նպաստ մը ապահովել՝ հայոց նոր սերունդներու կրոնական և բարոյական դաստիարակության գործին, մանավանդ մեր ժամանակաշրջանին, երբ գրեթե ամեն տեղ, առավել կամ նվազ չափով, մտահոգիչ կդառնա երիտասարդության ապաոգեկանացումը, զոհ դառնալով ան սխալ հասկցված ազատամտության գաղափարի, որ փաստորեն կտանի դեպի մարմնի և հոգիի այլասերում: Այս կացության առջև մեր եկեղեցին պետք է հանդես գա աշխարհի առաջ իր ուրույն հոգևոր-մշակութային ժառանգությամբ և զայն կենդանի ապրումի վերածե իր հավատացյալներու կյանքին ու գործին մեջ: Եվ ինչո՞ւ չէ, թերևս այս ճամփով մեր եկեղեցին իր որոշ բարերար ազդեցությունը կը-կարողանա թողուլ նաև տվյալ երկրի կրոնա-բարոյական հիմքերու ամրապնդման տեսակետեն: Ամեն պարագայի ոգեկանության սովի մեջ տվայտող մեր օրերու աշխարհին մեջ Հայաստանյայց եկեղեցին պետք է ամուր կանգնած մնա իր սեփական ազգային ոգեկանության արժեքներու պատվանդանին վրա: Ժամանակ պետք չէ կորսնցնել այլևս, մակերեսային նորարարությանց ամուլ փորձերով:

Մենք, հետևաբար, հրավեր կկարդանք ձեզ բոլորիդ շարունակել ձեր նվիրական առաքելությունը զեղուն հայ ոգեկանության ժառանգության գիտակցությամբ, ներքին ամուր միասնությամբ, համերաշխ, կարգապահ ու կազմակերպված աշխատանքով, ձեռք-ձեռքի տված ձեր հոգևոր հովիվներուն հետ, վերին տեսչության ներքև ձեր թեմական սրբազան առաջնորդին և Մեր օրհնությամբ:

«Գոհացարուք յամենայն ժամ ի վերայ ամենայնի, յանուն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Հօրն եւ Աստուծոյ»: Եւ «Հնազանդ լերուք միմեանց երկիւղիւն Քրիստոսի» (Եփես. Ե 21—22): Ամեն: